

# ԶԻՆԵԱԿ ՀՍԿՈՒՄ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

Ֆրանսական «Լը Մոնտ» տարածուն օրաթերթը Հայաստանի եւ Արցախի կացութեան նուիրուած թղթակցութիւններ հրատարակած է իր 13 եւ 17 Հոկտեմբերի թիւերով, առաջին էջին տպուած առաջնորդող յօդուածով մը, «Զինեալ հսկում կովկասի մէջ» խորագիրով: 13 Հոկտեմբերի թիւով տեղ տրուած է նաեւ Հերմին Սեւակ ստորագրութեամբ վկայութեան մը, ուր կը պատկերացուի Հայաստանի աղիտեալ շրջաններուն ողբալի վիճակը: Այս թիւով կուտանք Ֆրանսական թերթին առաջնորդող յօդուածը, յաջորդ շաբթուան վերապահելով 27 Հոկտեմբերի թղթակցութեան ամփոփումը:

Պատերազմին ուրուականը կը սպառնայ կովկասին:

Շրջանէն եկող բոլոր լուրերը մէկը միւսէն մտահոգիչ են, մանաւանդ Զորեմբաթի, 11 Հոկտեմբերի լուրը, նոյնիսկ եթէ այլեւս հանապազօրեայ երեւոյթ են բռնութիւնը, արիւնահեղութիւնը, մոլեռանդութիւնն ու յուսահատութիւնը, որոնք կը սպառնան բոնկեցնել երբեմնի Անդրկովկասը:

Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ խորհրդային երիտասարդ նորագէտներ կրակ բացած են վտանգաւոր նկատուած ամբոխի մը վրայ - մէկ մահ եւ տասնեակ մը վիրաւորներ: Մինչդեռ Կարմիր Բանակը հոն է՝ պաշտպանելու համար Ղարաբաղի հայերը, որոնք շարաքներէ ի վեր ազերիներու կողմէ ենթարկուած են տնտեսական անգութ շրջափակումի մը - ճանապարհներն ու երկաթուղիներն կտրուած են: Մարզը, գործնականին մէջ՝ պաշարման տակ, ամբողջութեամբ մեկուսացած է, մինչ սահմանին վրայ հայերու եւ ազերիներու միջեւ մահացու բախումները կը բազմապատկուին:

Լեռնային Ղարաբաղի այս պաշարումը Երեւանի մէջ կիրքերը կը բորբոքեն: Նոյն Զորեմբաթին, հարիւր հազար հայեր հաւաքուեցան իրենց մայրաքաղաքին մէջ՝ բողոքելու համար Մոսկուայի լուրեւան եւ կրաւորական կեցուածքին դէմ: Ազգայնական գործիչներ կոչ ըրին այս առթիւ հայ նորագէտներուն՝ մերժել բանակ մտնել, իսկ ատրպէյճանական սահմանին մօտ գիւղերուն դիմել զինեալ ընդդիմութեան:

Ինչ որ այս զինեալ հսկումի մը քննադատին մէջ ամենէն աւելի կը զարմացնէ՝ Մոսկուայի վարանումն է, չըսելու համար կողմնակալութիւնը - ահա, արդարեւ, շարաքներէ ի վեր Ատրպէյճանը անողոք տնտեսա-

կան շրջափակում մը պարտադրած է Հայաստանի, առանց որ կեդրոնական իշխանութիւնները միջամտեն, ի բաց առեալ կարգի հրաւիրելու կոչերէն, որոնք յամենայնդէպս անպատասխան մնացին: Բազմաթիւ անգամներ, արդէն, Պաֆու յայտարարեց որ վերջացած է շրջափակումը, քանի մը ժամ ետք գայն վերահաստատելու համար: Պաֆու, ուր քանի մը տասնեակ հազար հայեր, որոնք չկրցան փախչիլ՝ թափնուած կը մնան իրենց տուններուն մէջ, վախնալով նոր սպանդներէ:

Յատկապէս վիրաւորական է, որ Մոսկուա այսօր առեւտրեալ հանդուրժեց Հայաստանի շրջափակումը: Հետեւանքները աղետալի են - փոխադրական միջոցներու անդամալուծում՝ քարիւղի պակասին պատճառաւ, մօտալուտ ձմրան՝ ջեռուցման անկարելիութիւն, գործարաններու արդիւնաբերութեան դադարում եւ ապրանքները այլ հանրապետութիւնները հասցնելու անհնարինութիւն: Ա՛յ աւելի ահաւոր՝ ստիպողական ընդհատում անցեալ տարուան մահացու երկրաշարժին ի հետեւանք վերակառուցման աշխատանքներուն:

Այս պայմաններուն մէջ կրնանք հասկնալ որ հայոց համակերպումը վերածուի յուսահատութեան, նոյնիսկ գայրոյթի: Սակայն տակաւին չենք կրնար հասկնալ Քրեմլինի սպասողական քաղաքականութիւնը, այն Քրեմլինի, որ ինքզինք պաշտպանը կը հոչակէ հայոց (քրիստոնեաներու), շրջապատուած, բացի Վրաստանէն, մահմետական ժողովուրդներով: Բացի եթէ, Պրն. Կորպաչով, կենդանի ազգայնականութիւն մը հարուածելու համար շնականօրէն կը շահագործէ բնական աղետն ու դարաւոր ատելութիւնները: